Մրցույթի հայտարարության տեքստը.

Հայտարարվում է մրցույթ՝ «Երևանի Ն.Վ.Գոգոլի անվան № 35 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի

- «Ռուսաց լեզու և գրականություն» առարկայի (22 դասաժամ)՝ 1 ուսուցչի,
- «Մաթեմատիկա» առարկայի՝ միջին դպրոց հանրահաշիվ և երկրաչափություն, (30 դասաժամ)՝ 1 ուսուցչի,
- «Ինֆորմատիկա» առարկայի (22 դասաժամ)՝ 1 ուսուցչի,
- «Կենսաբանություն» առարկայի՝ ռուսերենով ուսուցմամբ դասարանների, (8 դասաժամ)՝ 1 ուսուցչի,
- «Ֆիզկուլտուրա» առարկայի՝ տարրական և հիմնական դպրոցներում, (52 դասաժամ)՝ 2 ուսուցչի,
- տարրական դասարանների դասվարների՝
  - ✓ հայերենով ուսուցմամբ դասարաններում (18 դասաժամ)՝ 1 ուսուցչի,
  - ✓ ռուսերենով ուսուցմամբ դասարաններում (18 դասաժամ)՝ 1 ուսուցչի,

թափուր տեղերի համար:

Մրցույթներն անցկացվում են երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՍՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1),
- մեկ լուսանկար 3*4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրապարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև սեպտեմբերի 21-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ն, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 26-ին՝ ժամը 15:00-ին, ՀՀ Երևանի Ն.Վ.Գոգոլի անվան № 35 հիմնական դպրոցում. հասցեն՝ ք. Երևան, Էրեբունի փողոց, 16 շենք:

Տեղեկությունների համար զանգահարել՝
+374(10)45-21-01 կամ +374(91) 21-62-52 հեռախոսահամարներով: